Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1356

1999

ԱԼՖՐԻԴ ԴԸ ՄԻՍՍԷ

ՆՈՐ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԸՆՏՐԱՆՕՎ

ՊԵՏՐՈՍ ԽԱՉԱՏՈՒՐ ԹԻՐԶԵԱՆ

ԻԶՄԻՐ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄՍԵՐԵԱՆ

1878

ԱԼՖՐԻԷՏ ԴԷ ՄԻՍՍԷ

ՆՈՐ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԸՆՏՐԱՆՈՎ

ՊԵՏՐՈՍ ԽԱՉԱՏՈՒՐ ԹԻՐԶԵԱՆ

ԼԷՕ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԻԶՄԻՐ
ՏՊԱԳՈՒԹԻՒՆ ՄՍԵՐԵԱՆ
1878

Սեփականաւ Թիւն
Վ.Ա.Ղ.Ա.Ն Ց. ՊԻՊԻՆԱՆՑ Ի

ՄԵԾԱԳԱՏԻ

ՑՕՓԹՕՐ ՊՕԶԸՍ Գ. ԿՈՍՏԵՆՊԵԼԵՆԻ

ԿԸ ՆՈՒԻՐԷ

ԽՊԻՔԻՆ ՄԵԾԱՔԱՆՈՒՄ

Պ. Խ. ԹԷՐԶԵԱՆ

ՀՖ 1359 Ф1356-60

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Ալֆրէտ Տը Միւսէ Ֆրանսայի հռչակաւոր գերթողին բանահիւսական գրուածոց վսեմութիւնը եւրոպիոյ քաղաքակրթեալ Ազգերէն արդէն ճանչցուած եւ յարգուած ըլլալով՝ անշուշտ մեր Ազգին լեզուագէտներն եւս այս ընտիր մատենագիրը կարդացած են։

Մենք եւս Ազգիս հանրութեան զայն ծանօթացընելու համար, փափաքեցանք սոյն մասերը ընտրանօք թարգմանելով՝ առ այժմ թղթակազմ թերթերով զատ զատ 'ի լոյս ընծայել, ապագային ամենքը մէկէն մասնաւոր հատորի վերածել խոստանալով։

Ցուսով եմք որ մեր այս աշխատութիւնը ընդունելութիւն կը գտնէ, եւ մեր սիրելի Ազգայինք ներողամիտ կ'ըլլան մեր թերութիւններուն։

ԼԻՌԻՔ

ԵՂԵՐԵՐԳ

Սիրոն բարեկամք, երբոր ես մեռնիմ,
Տնկեցէք ուռի մ'իմ շիրմիս վերև։
Կը սիրեմ անոր լալագին տերև,
Դեղնութիւնն է ինձ քաղցր և սիրագին,
Եւ իւր հովանին պիտ՝ ելլայ թեթև
Այն հողին, յորում ես պիտի հանգչիմ։

Մինակ էինք, երեկոյ մի, նստած էի նորա քով
Դքլուխն 'ի վայր հակած էր նա, և մեղայոյզ ցնորքով
Իւր գաշնակին վերայ թողուր ձիւնափայլ ձեռն 'ի ծածան։
Մբրմունջ մ'էր այս գաշնակաւոր, պէս զեփիւռի մը փչման,
Որ 'ի հեռուստ երբ կը սահի եղեգներուն վրայէն,
Կը վախնայ որ չարթնցնէ թռչունքն իրենց բոյներէն։
Մելամաղձոտ գիշերներու մեղմ հեշտութիւնքն համբրէն
Կը բուրէին մեր բոլորտիք ծաղիկներու բաժակէն։
Ցանկապատին կակենիներն և կաղնիներ վազեմի
Կ'օրորուէին մեղմիկ իրենց ոստերուն տակ ցօղալի։
Սակ գիշերուան ունկնդրէինք. և կիսաբաց լուսամուտ
Մեղ կը բերէր գարնանային բուրմունքն ամեն քաղցրահոտ.
Լուռ և հանդարտ էին հովերն, գաշան ամայի էր համայն.
Մինակ էինք և մեղմաձոհ, հազիւ տատանիմք տարեկան։
Կը գիտէի ես զԼիւսին։ — Նա խարտեաշ էր և տժգոյն։
Երբէք այնպէս քաղցրիկ աչեր պայծառ երկնի խորութիւն
Զբաշխեցին, և ոչ անոր ցոլացուցին կապուտակ։
Դեղջիկ աղջիկ՝ սիրէի զինքն երկրիս վրայ միայնակ։

Բայց կարծէի այնպէս սիրել, ինչպէս քոյր մի կը սիրեն,
Այնքան անոր պարկեշտափայլ էին ձևերն համբոյրն։
Երկար ատեն մեզ լքուեցին.. իմ ձեռն հեպէր իւր աջոյն,
Կը դիտէի նորա չքնաղ տքրտուռմ ճակատն երազուն,
Եւ իմ հոգւոյս մէջ կ'զգայի, իւրաքանչիւր շարժումէն,
Թէ մեր վիշտերն բժշկելու համար որքան ազդու են
Նշանակներն այդ երկուորեակ երջանկութեան, հանդստի,
Մատաղութիւն կերպարանքի, մատաղութիւն և սքրտի։
Անմեղ երկնի մէջէն յանկարծ ծագեց բամբիշքն լուսին
Երկայն շողով մ'արծաթափայլ ծաւալեցաւ երեսին.
Նա այն ատեն իրեն դէմքին փայլն աչերուս մէջ տեսաւ,
Ժպիտ մ'ունէր հրեշտակային. եղանակել ըսկսաւ։

. . . . . .

. . . . . .

Դաշնակութիւն, դաշնակութիւն, ով դուսաբը դու սրտմութեան։
Ո՛վ լեզու, զոր սիրոյ համար ստեղծեց հանճարն մարդկութեան։
Երկնապարգևիդ Բաղական, ուստի մեզի եկար դու։
Սքրտի լեզու քաղցրաբարբառ, ուր մի միայն միտք մարդու,
Կոյն այն երկչտա, և ստուերէ մ'անգամ գոդցես ամենլեած,
Կ'անցնի դէմքով քօղածածուկ, և աներկիւղ իսկ յաչաց։
Ով կարող է գիտնալ երբէք տքրտու մ'բաժն և լքսած
Հառաչներուդ մէջն երկնային, ծքնեալ օդէն իւր չքնչած,
Ցքնարալի՝ իւր սքրտին նքման, և անոյշ՝ պէս իւր ձայնին։
Կամիլ մ'ստուսուք և մի ակնարկ մի միայն հոն կ'երևին.
Իսկ ճնացածն է մի խորհուրդ բաղմութենէն միշտ թաղուն,
Նքման գաղտնեաց ալիքներուն, անտառաց և գիշերոյն։

Մինակ էնք և մշտախոհ, կը գիտէի ըզլիւսին։
Կարծես ըզմեզ դաղտնէր արձագանքն իւր տագնրդին։
Իւր ծանրացած գլուխն անդէն վերաս դքրաւ նա մեզմիկ։
Տէատէմոնան արդեօք հեծէր քո սրտին մէջ, հէդ մանկիկ։
Կ'ստուսուէիր դու լալագին, և թոյլ տայիր տքխրարար՝
Քու պաշտելի բերնիդ վերայ դքնել չքրթունքս սիրավառ,
Եւ միայն քո ցաւդ բնդունեց իմ համբոյրներ հքրատապ։
Այսպէս, երբ ես քեզ փարեցայ, պաղ էիր և դունաթափ
Այսպէս, երկու ամիս յետոյ, դու դրուեցար դերեզման.

Այսպէս, ծաղիկդ իմ կուսադեղ, թառամեցար տարաժամ։
Մահդ՝ որ կեանքիդ նքման քաղցր էր, եղաւ ժքպիտ մը միայն,
Եւ փոխեցար դու առ Աստուած, 'ի քո նախկին օրորան։

. . . . . .

Անոյշ խորհուրդ այն յարկին, ուր անմեղութիւն բքնակի,
Երդեր, երազք սիրոյ, ծիծաղք, խօսակցութիւնք մանկունի,
Եւ դու, որոյ չիք դիմադարձ, ով հքրապոյր անծանօթ,
Որ մքտածել տուիր զՓառուստ, Մարգարիտեայ սեամին մօտ,
Անմեղութիւն դու մանկական, ո՜հ, ձեզ արդեօք ինչ եղաւ։
Մանուկ, հոգւոյդ, յիշատակիդ, խաղաղութիւն անզքրաւ։
Մքնաս բարեաւ, ձիւնափայլ ձեռդ, դաշնակին վրայ փղոսկրեայ,
Բոլորն գիշերն ամարայնի ոչ ևս պիտի թքռթքռայ։ . . . .

Սիրուն բարեկամք, երբոր ես մեռնիմ
Տքնկեցէք ուռի մ'իմ շիրմիս վերև։
Կը սիրեմ անոր լալագին տերև,
Դեղնութիւնն է ինձ քաղցր և սիրագին,
Եւ իւր հովանին պիտ՝ ըլլայ թեթև
Այն հողին, յորում ես պիտի հանդչիմ։

ԱՐԱՅԻԱՅ ԳԻՇԵՐԸ

ՄՈՒՍԱՑՆ

Լարէ՛ քընարդ, ո՛վ դու Քերթո՛ղ, շնորհէ՛ և ինձ համբոյր մի.
Դեռաբուսիկ վայրի վարդը ծիլ արձակել կ'ըսկսի։
Մագի դարուն այս երեկոյ, չքնչեն հեզիկ տաք հովեր.
Եւ տքաներեր թքուչնիկը որ արշալուսոյն կ'ըսպասէր,
Դալարագեղ մացառներուն վերայ իսկոյն կը հանդչի։
Լարէ՛ քընարդ, ո՛վ դու Քերթո՛ղ, շնորհէ՛ և ինձ համբոյր մի։

ՔԵՐԹՈՂՆ

Հովերն մէջն ինչպէս մութը կը տիրէ,
Ուր քօղարկեալ դէմքը մի կարծես թէ
Թռուցեալ ծածանէր դէպ՝ անտառն 'ի վեր։
Եւ մարգագետնէն երբոր դուրս կ'ելնէր,
Մաղկաւէտ երկրէն կը սահէր, կ'անցնէր.
Ահա ցընորք մ'է սա օտարօտի,
Որ աներևոյթ կ'ըլլայ, կ'անհետի։

ՄՈՒՍԱՑՆ

Լարէ՛, քընարդ, ո՛վ դու Քերթո՛ղ, գիշերն 'ի վայր դալարուտ,
Կը տատանէ զեփիւռն անոյշ իւր քօղին մէջ գեղահոտ։
Դեռաբուսիկ վարդն անարատ մինչ նախանձոտ կը գոցուի
Մարգարտափայլ պիծակն իր մէջ քաղցրանուագ կը մեռնի։
Ունկնդիր. լուռ է ամեն ինչ, գիշէ՛ դու արդ սիրուհիդ։
Այս երեկոյ թքմբեաց տակը մութ ստերուն թանձրախիտ.

Վերջին նշոյլն Արևմտեան հրաժեշտ մի տայ քաղցրադոյն։
Համայն ծաղկի այս երեկոյ՝ նաև անմահ բընութիւն.
Անուշահոտ բուրմամբ, սիրով և մբրմունջով կը լեցուի,
Զուարթարար անկողնոյ պէս երկու դեռահաս ամուսնի։

ՔԵՐԹՈՂՆ

Ո՜հ, ինչո՞ւ սաստիկ սիրտս կը տրոփէ։
Ի՞նչ ունիմ յիս որ, դիս այսպէս յուզէ,
Որով զարհուրած կ'զդամ դիս անդէն։
Ո՞չ ապաքէն իմ դուռս կը դարնեն։
Ինչո՞ւ համար այս կիսաքառ կանթեղ
Շեղացընէ դիս լուսով յորդաղեղ։
Հեղգ՞ Ցէր, դողայ իմ բոլոր մարմին։
Ո՞վ կու գայ, ո՞վ դիս կը դոչէ։ —Ոչմին։
Մինակ եմ, ժամն է, որ հընչէ ուժգին.
Ո՜վ առանձնութիւն, ո՛վ աղքատութիւն։

ԳՐԱԳԱՐԱՆ

ՄՈՒՍԱՑՆ

Լարէ՛ քընարդ, ո՛վ դու Քերթո՛ղ. պատանութեան բուռբն խանդ
Ատուածութեան երակայ մէջն արդ բորբոքի բոցեռանդ։
Անհանգիստ է այժմիկ իմ սիրտ, զոր հեշտութիւնքն նեղէ,
Եւ հովերքն ծարաւաբեկ իմ շրթունքներ տաչորէ։
Ո՛վ հեղգասէր դու պատանի. տես, ինչպէս իմ դեղանի։
Ձե՞ս յիշեր դու մեր առաջին այն համբոյրը սիրալի,
Երբոր թեւքս դքսալ քեզի, և տեսայ քեզ դալկահար,
Երբ աչերուդ արտասուալի բաղուկներուս մէջն ինկար։
Ո՜հ, այն ատեն քափոփեցի քեզ այն դառքն տանջանքէդ։
Աւա՜ղ, դու դեռ մի պատանի՝ կը մեռնէիր տարփանքէդ։
Մբխեթարէ՛ դիս այս գիշեր, մահամերձ եմ ես անյոյս,
Եւ պարտաւոր աղօթելու որ ապրիմ ես մինչև լոյս։

ՔԵՐԹՈՂՆ

Արդ դո՞ւ ես, որոյ ձայնը դիս դոչէ,
Ո՛վ Մուսայդ իմ հեզ, դու ինքդ ես միթէ։

Անմահ դիցուհիս, ծաղիկ սրտահեշտ։
Միակ էակդ անմեղդ և պարկեշտ,
Ուր դեռ ցարդ կ'ապրի այն գողտրիկ իմաստ
Այս, դու ինքդ ես, իմ խարտեշահեր,
Դու ես, Տիրուհիս, և դու ես իմ քոյր։
Եւ ես կ'զդամ այս գիշերիս մէջ խոր,
Որ յիս համատիւռ ոսկեհանդերձիդ
Ճառագայթները կը սահին յիմ սիրտ։

ՄՈՒՍԱՑՆ

Լարէ քընարդ, ով դու Բերթող, ես եմ անմահ դիցուհիդ,
Որ այս գիշեր տեսայ ըզքեզ աբխրագէմ և լռանիստ,
Եւ որ նըման այն թռչունին, զոր իւր ձագեր կը կանչեն,
Այնպէս դու հետ արտասուելու ինչայ երկնից բարձունքէն։
Ե՛կ մըտերիմ, կը տառապիս։ Առանձնութեան մի ձանձրոյթ
Քեզ կը հիւծէ, և քո սրտին մէջ կը հեծէ բան մ'անշուշտ.
Սէր մ'ունիս դու, երկրիս վերայ տեսնուածին ճիշդ նըման,
Սառնրական մի ցանկութիւն, երջանկութեան կերպարան։
Եկա՛, երգեմք մեք առ Աստուած. երգեմք ըստ քո մտածմանց,
Քո կորուած հաճոյքներուդ, և քո անցեալ անձկութեանց.
Ի մի հանրոյր՝ մեզ անծանօթ օտար աշխարհ մ'օն երթանք։
Արթնցընենք ըստ պատահման նաև կենացիդ արձագանք,
Երջանկութեան վերայ խօսինք, յիմարութեան և փառաց,
Եւ այս ըլլայ թող մի երաշ, որ ևիկէ պատահած։
Երթանք գըտնենք այնպէս վայրեր, ուր մոռանալն էր հընար.
Մեկնինք ուրեմն, առանձին եմք, մերն է համայն այս աշխարհ։
Ահա դալարն ըՍկոտիա, թըխակարմիրն Իտալիա,
Եւ Ցունաստան, մայր մուսայից, ուր խիստ անոյշ մեղրը կայ,
Ահա Արդոս, Պըռէլէոն, զոհաբաղաք շատ եղանց,
Երկնատեսիլ նաև Մէսայ, հաճոյավայրն աղաւնեաց.
Փոփոխական Պէլիոնի վարագիտակն արտեան.
Կապուտագոյն Տիտարէոն ւ՝արծաթափայլ խորշքն այն,
Ուր կարապը հայրենի պէս կը տեսնէ իւր դէմքն արձակ,
Կ'երևցընէ զՊլոան ճերմակ Կամիրոսին ըսպիտակ։
Ըսէ՛ ինձ, զո՞ր վայրուն երաշն պիտի օրորեն մեր երգեր։

Ուսկից արդեօք մեզ գալու են մեր թռիչելիք արտասքներ։
Այս առաւօտ, երբոր լոյսը արտեանանց քո զարկաւ,
Ո՞ր սերովբէն մըտավորհուրդ՝ բարձիդ վերայ հակեցաւ,
Եւ շեփորուկ թօթափելով թեթեւափայլ հանդերձէն,
Քեզ մեղմաձայն իւր երաշած պատմէր տարփանքն համօրէն։
Երգելու եմք մեք արդեօք յոյս, արտմութիւն կամ ցնծութիւն։
Պողոտաեայ վաշտերն անդամ մըխելու եմք 'ի յարիւն։
Մեռաքսեղէն սանդուղքն 'ի վեր հանելու եմք տարփածուն։
Երիփարին ըրձունքն անդամ խաչառ տալու եմք հողմոյն։
Ըսելու եմք, որ ձեռն՝ երկնից կանթեղներուն մէջն անթիւ
Ցաւերժ սիրոյ, կենաց սուրբ իւղն վառէ գիշեր և 'ի տիւ։
Գոչելու եմք մեք Տարկէնի։ «Ժամ է, ահա այն սուտեր»։
Իջնելու եմք ծովուց յատակ քաղել մարգրիտն անմահեր։
Դառնաճաշակ երենոսայ բերելու եմք այծն արդեօք։
Ցոյց տալու եմք երկնակամարն սեւամաղձին բազմահոգ։
Հեռուելու եմք զարդրին այն սեպագեալ լեռներէ,
Ուր եղնիկը 'ի տես նորին պաղատելով կ'արտասուէ.
Հաւամբրդին իւր կ'սպասէ. նորածին են եղնորթներ.
Կը նաւաղի, և զարդրը զայն մորթելով կու տայ կեր
Նորա սիրոյ դեռ բարախուն իւր շուներուն քրանալի։
Նըկարագրե՞մք նաև մի կոյս իւր այտերով ծիրանի,
Որ մանկաւարին եռին ձրգած պատարագի երթալով,
Անմբտադիր մի նայուածքով երբ կեցած է մոբք քով,
Իւր կիսարաց շրթանց վերայ իւր ազօթքը կը մոռնայ։
Եւ կամարին արձագանքին նա դողալով կ'իմանայ
Մէկ համարձակ գոռ Աստեան մըտրակներուն շառաչիւն։
Ըսելու եմք մեք Գաղղիոյ այն հինաւուրց քաջերուն
Ըսպառազէն վերելանել իրենց բերդին որմածերպ,
Եւ վերատին յարուցանել այն բընական սիրավէպ
Զոր վաղանցուկ իրենց փառքը ուսոյց երգիչ Բերթողայ։
Ճերմակաղարդ պիտի պըճնե՞նք թոյլ եղերգ մի սեւազգեաց։
Իւր անցեալը պատմելու է Վալթերլոյի մարդը մեզ,
Եւ մարդկային խումբէն հընձած իրեն բոլոր ողջակեզ
Ցաւխենից մութ գիշերուան հրեշտակը տակաւին
Զայն թեւահար չկրծանած վերայ դպոր իւր բըլրին,
Եւ քար սրտին վերայ ձեռքերն իւր խաչաձև չդրած։

Քամելու եմք երգիծական ցիցին վերայ խրոխտապանծ
Մէկ անանուն պարսաւադրի ծախուած անունն եօթն անգամ,
Որ, ըստիպմամբ անօթութեան, կու դայ խորէն մուռացման,
Բոլորովին սարսքռալով, նախանձոտ՝ այլ անզգրեղ,
Թքշնամանել յոյսն 'ի վերայ մի ճակատի հանճարեղ,
Եւ աղարտել իւր պիղծ չքնչով փառաց պլսակն այն չքքեղ։
Լարէ քքնարդ. լարէ քքնարդ. ոչ ևս կարեմ ես լքռել.
Քքչմամբ գարնան արդ թևքս դիս վերացնէ անարգել։
Եւ հովերքը կը տանին զիս. ահա թողում ես զաշխարհդ։
Կաթիլմ՝արտասուք թափէ աչքէդ։ Տէրն ինձ լքսէ. ժամէ արդ։

ՔԵՐԹՈՂՆ

Թէ քեզ պէտքը չէ, քոյը իմ սիրելի,
Եթէ ոչ համբոյր չքրթանց մքաերմի
Եւ կաթիլ մ՝արտասուք իմ այս աչքերէս,
Ես քեզ անաշխատ տալու եմ սքրտէս.
Ցիշէ միշտ յիշէ մեր այս տարփանքներ,
Եթէ սքլանաս դու յերկինս 'ի վեր։
Ուստի չերգեմ ես այն յոյսն ապարդիւն,
Ոչ այն փառքն և ոչ այն երջանկութիւն,
Աւաղ, և ոչ իսկ ամեն անձկութիւն։
Զի միշտ լքռութիւն կը պահէ բերան
Սքրտի խօսիլք լքսելու միայն։

ՄՈՒՍԱՑՆ

Կարծես ուրեմն որ ես ըլլամ աշնան հովի մք նքման,
Որ արտասուքով կը սքնանի մինչև շիրմի մք վերան,
Որոյ համար միշտքն անգամ ջքրոյ կաթիլ մ՝է միայն։
Քերթող, ես քեզ ինքնանուէր չնորհեմ համբոյր սիրական։
Այն խոտք, զոր կը բաղձայի խքլել վայրէս այս 'ի բաց,
Անգործութիւնդ է այն. քո ցաւ վերաբերի առ Աստուած։
Պատանութեան քո կրած միշտն որքան ըլլայ կարեվեր,
Թող որ աղատ ընդարձակի այդ քո վերքքը սրբանուէր
Զոր սեաղգեաց սերովբէներ բացին 'ի խոր քո սքրտիդ.
Ոչինչ բզմեղ կ'ընէ վքեմ՝ որքան աղէտ մեծամիշտ։

Որոյ հարուածն ընդունելով՝ մի կարծեր դու, ով պուէտ
Թ՝անլսելի մքնայ քո ձայն այս աշխարհիս մէջն յաւէտ։
Թիստ յուսահատ նուագներն են գեղեցկագոյն քան զամեն,
Եւ ես գիտեմ անմահ երգեր, որք հեծեծանք միայն են։
Երբ հաւալուն երկար ճամբէ խոնջեցած ետ կը դառնայ,
Մքշուշապատ երեկոյին դէպ՝ իրեն բոյնն եղեգնեայ,
Իւր անօթի ձագերն իսկոյն ծովափունքքը կը դիմեն
Հեռուանց անոր ջքրոց վերայ խոյանալը որ տեսնեն։
Եւ որսերնին յափքշտակել և բաժանել կարծելով՝
Իրենց հօր քով դիմեն իսկոյն ուրախութեան ճիչերով,
Իրենց տքձև կախ կոկորդին վերայ կքտուց կը շարժեն։
Իսկ հայրն հանի յուշիկ յուշիկ 'ի ժայռ մի բարձր եղերքէն,
Եւ իւր կախուած մէկ թևովք պատքսպարէ իւր ձագեր,
Իրրև ձքկնորս մեքսմաղձոտ դիտեն երկինքն իւր աչեր։
Արիւնն հոսէ հեղեղի պէս իւր ճեղքուած կուրծքէն վար.
Ի գլուր ծովուց խորութիւնքը որոնած էր անդադար.
Ովկիանոսն իսկ պարապ էր և ծովափունքն ամայի.
Կերակրոյ տեղ քերած էր նա միայն իւր սիրտ գքթալի։
Եւ տարածուած լուռ և տքրտում ապառաժին այն վքրան,
Կը բաժանէ իւր ձագերուն իւր աղիքներն հայրական,
Իւր վիհագոյն սիրոյ մէջն իսկ նա իւր ցաւքը կ'քսփոփէ,
Եւ տեսնելով որ իւր կուրծքքը արիւնալի կը հոսէ,
Մեռելոտի ճաշին վերայ նուաղելով՝ տատանի,
Եւ հեշտութեամբ, խանդաղանօք, և սոսկումով կը մոլի։
Սակայն երբեմն այս երկնաւոր պատարագին իսկ ատեն,
Նա խոնջեցած երկարատև չարչարանքով մեռնելէն,
Կը վախնայ որ զինքն կենդանի ձքգեն դեռ ևս իւր ձագեր.
Մէկէն կանգնի այն ժամանակ, բանայ հովին իւր թևեր,
Եւ զարնելով ինքն իր սքրտին ճիչով մ՝ահեղ խուժադուժ
Գիշեր ատեն նա կ'արձակէ հրաժեշտ մ՝այնպէս մահագոյժ,
Որ ծովերուն թքռչուններն իսկ կը խուսափին ծովեզրէն,
Եւ ուր նաև ճանապարհորդն ուշ մքնացած այն ատեն,
Կարծելով թէ մահու ձայնն է, կ'ապաւինի առ Աստուած։
Քերթող, այսպէս կ'քնեն ահա, քերթողներն իսկ վեհապանծ։
Կը թողուն որ հրճուին անունք, որ ժամանակ մք կ'ապրին.
Սակայն իրենց տանին կաղմած այն կոչունքներ մարդկային։

Մեծաւ մասամբ կը նշմանին հաւալքսանց ճաշերու։
Երբ կը խօսին այսպէս վերայ իրենց խարուած յոյսերու,
Տքխրութեան և մռայլութեան, սիրոյ նաև հիգութեան,
Երգահանդէս մ'այդ չէ երբէք հրճուել բզսիրա մարդկութեան։
Իրենց խօսած բոլոր ճառերն այն սուրերու նման են,
Որ օդին մէջ ակնախքտիլ մի բոլորակ կը գծեն.
Սակայն յաւէտ այդ սուրերէն արեան չիթեր կը կաթեն։

ՔԵՐԹՈՂՆ

Ո՛վ Մուսայդ, անյաղ ոգիդ ուրուական,
Մի հարցափորձեր զիս այդչափ երկայն։
Մարդ բան չը գիրեր վերայ աւազի
Այն ժամուն, յորում հիւսիսեակն անցնի։
Տեսայ ժամանակն իմ պատանութեան,
Ուր պատրաստ էի ես երգ 'ի բերան
Նուագել յաւէտ թքռչունի նման։
Բայց ես կիրեցի տանջանք դառնալի,
Զոր եթէ փոքր ինչ կարողանայի,
Երգելու փորձել քընարիս վրան՝
Զայն կը խորտակէր եղէգի նման։

ԳԿԱՏԿՄՔԿԻՐ ԳԻԹԿԻՐ

ՔԵՐԹՈՂՆ

Երբ 'ի դիպրոցն աշկերտ էի,
Արթուն կեցայ երեկոյ մի
Մեր սիրահին մէջն առանձին։
Նստաւ յատակն իմ սեղանին
Մի խեղճ մանուկ հագած սևեր,
Որ իրր եղբայր մ'ինձ նշմանէր։

Գեղատիպուր էր դէմքն իրեն.
Իմ ճիրագիս աղօտ լոյսէն,
Բացուած գիրքիս մէջ կարդայ նա։
Ծիւեց ճակատն ձեռքիս վերայ,
Մինչ 'ի վաղիւ կեցաւ ճիշդիտ,
Նա մնատասոհ քաղցր 'ի ժիպիտ։

Տանհինգ տարուան որ կ'ելլայի,
Օր մը հանդարտ կը քայլէի,
Անտառի մէջ, թիփոց վրայէն։
Ծառի մը տակ նստաւ մէկէն
Մի պատանի հագած սևեր,
Որ իրր եղբայր մ'ինձ նշմանէր։

1968

Հոն հարցուցի ճամբան երկն.
Մէկ ձեռն ունէր քընար մ'արդէն,
Միւսով մէկ փունջ վայրի վարդ։
Զիս բարևեց պէս մշտերմի,
Եւ դառնալով ինձ կիսովին,
Ցուցուց բլուրն ծայրով մատին։

Այն հասակին, ուր սէր կ'ըզդան,
Մէկ օր իմ խուցս էի միայն,
Իմ առաջին ցաւս ողբալով։
Եկաւ նըստաւ կըրակիս քով
Պանդուխտ մէկը հագած սևեր,
Որ երբ եղբայր մ'ինձ նըմանէր։

Նա տխուր էր և բաղմահոգ.
Ցոյց տար երկինքն իւր մէկ ձեռօք,
Միւսով բըռնէր նա մի սուսեր։
Նըմանավիշտ ինձ կ'երևէր,
Հառաչանք մը բերնէն թըռաւ,
Եւ երբ երազ մ'անհետացաւ։

Այն հասակին, ուր են ստահակ,
Ի հացկերոյթ էմպել բաժակ,
Վեր վերցուցի օր մ'իմ գաւաթ։
Եկաւ նըստաւ իմ դէմս ազատ
Մի կոչնական հագած սևեր,
Որ երբ եղբայր մ'ինձ նըմանէր։

Վերարկուին տակն էր նա հագած
Ցքնցոտի զգեստ ծիրանագեղեց,
Ունէր իւր գլուխն մըրտի մ'անբեր։
Վըտիտ բազուկն իմն որոնէր,
Երբ իմ գաւաթ իւրոյն զարկաւ,
Անգոր ձեռքիս մէջ փըշրեցաւ։

Տարիէ մ'ետք, երբ գիշեր մի,
Այն մահճին մոտ ծընրադրէի
Ուր իմ հայրիկ վախճանեցաւ։
Բարձին վերայ եկաւ նստաւ
Իսկոյն մէկ որբ հագած սևեր,
Որ երբ եղբայր մ'ինձ նըմանէր։

Արտասուալի էին աչեր.
Իրրև ցաւոց հըրեշտակներ,
Փըշաքըսակ էր զարդարուած.
Քընարն յերկիր մէկ կողմ ձգած,
Արիւնաներկ էր ծիրանին,
Եւ դըրած էր սուրն իւր կուրծքին։

Այնքան ապէկ գինքն յիշեցի,
Որ մինչև ես զայն ճանաչեցի
Կեանքիս ամեն իմ վայրկեաններ։
Օտարոտի սա տեսիլք մ'էր,
Սակայն հրեշտակ կամ սատանայ
Ամեն կողմ սերտ սուերդ տեսայ։

Բայց վըշտաբեկ ես հուսկ ազա,
Ցրանտէն մեկնել փափաքեցայ,
Վերածնելու կամ մեռնելու.
Մինչ անհամբեր ես քայլելու,
Ուզեցի որ երթամ գըտնեմ
Մի յուսոյ հետք ինձ տարադէմ։

Բիզա, տորոսքն Արենեանց.
Ի Բոլոնիա, Ռէնին գիմաց.
Նիս, զառ'իմայրն հովիտներուն.
Ֆլորանս, խորք պալատներուն.
Պրիկ, 'ի հին հիւղս պանդագործաց.
Ամայացեալ 'ի ծոցն Ալպեանց.

Ժէնէվ, տակը լեմմենեբու.
Վէվէյ, կանաչ խնձորներու.
Ի Հավր, առաջն Ատլանտեանի.
Ի Վենետիկ, Լիտօ յոռի,
Ուր գայ տըժգոյնն Ադրիական
Ցամքիլ շիրմի խոտին վերան.

Ամեն կողմ, այս երկնից տակ լայն,
Ուր աղէտքով մը շոշնջական՝
Սիրտս և աչերս խանջեցի փոյթ.
Ամեն կողմ, ուր կաղքն Զանձրոյթ,
Խոնջէնքս իւր յետը քարշելով՝
Չիս ժուռ ածեց պատգարակով։

Ամեն կողմ, ուր միշտ ծարաւի
Տեսնել աչխարհ մ՚անգիտելի,
Սին երազոցս հետևեցայ.
Ամեն կողմ ուր կրկին տեսայ
Դեռ ևս չ՚ապրած, իմ տեսածներս
Մարդկան երես և իւր սուտեր.

Ամեն կողմ, ուր վերայ ճամբուս,
Դըբի ճակատս մէջ ձեռքերուս,
Հեծկըլտալով կանացաբար.
Ամեն կողմ, ուր իրրև ոչխար,
Որ իւր բուրդը տայ թուփերուն,
Զգայի դրկանքն ես իմ հոգւոյն.

Ամեն կողմ, ուր խընդրեցի նինջ,
Ուր կամեցայ մեռնիլ ընաջինջ,
Ամեն կողմ, ուր իմ սաք դըպաւ,
Ճամբուս վերայ եկաւ նըստաւ
Թշուառ մէկը հագած սևեր,
Որ իրր եղբայր մ՚ինձ նըմանէր։

Արդ՝ ո՞վ ես դու դոր կեանքիս մէջ համակ
Ճամբուս վերայ միշտ կը տեսնեմ։
Ըստ քո տըխրութեան, երբէք չըկարծեմ,
Որ բազդս ըլլաս չարագուշակ։
Հեշտ ժըպիտդ ունի շատ համբերութիւն,
Եւ արտասուքներդ շատ գըթութիւն։
Քո տեսլեամբ սիրեմ զնախանձամութիւն։
Քոյր է քո ցաւդ իսկ և իմ անձկութեան
Որ նըմանի Մըտերմութեան։

Արդ՝ ո՞վ ես։ —Բարի դու իմ հրեշտակ չես,
Ինձ ազդ առնել չես դար բընաւ։
(Տարօրինակ բան) կը տեսնես իմ ցաւ
Եւ լոկ կ՚ըլլաս հանդիսատես։
Ճամբաս կը քայլես, քըսան տարի է,
Եւ չեմ գիտեր անունդ ինչ է։
Արդ ո՞վ ես թէ քեզ Աստուած յուղարկէ,
Ինձ կը ժըպտիս դու, չես ուրախակից,
Մըխիթար չես, այլ ցաւակից։

Դեռ այս երեկոյ քու դէմքդդ տեսայ։
Ցըխուր գիշեր մ՚էր ինձ համար։
Իմ պատուհանը կ՚ըլլար հողմահար.
Հակեր էի մահճիս վերայ։
Ուր կը դիտէի տեղն այն կաթոգին,
Ջերմ համբուրիւ վառ տակաւին.
Կը խորհէի թէ մոռացկոտ է կին,
Եւ կ՚զդայի որ բաժին մ՚իմ կեանքէս
Կը պատռուէր դանդաղապէս։

Ժողվէի գիրերն առջի գիշերուան,
Մաղեր, սիրոյ մընացորդներ։
Բոլոր այս անցեալն ականջիս գոչէր
Ցաւերժ երդումն իւր մէկ օրուան։
Ես կը դիտէի այդ սուրբ նըշխարներ,
Որով իմ ձեռս կը սարսքուէր.

Սրբոին մէջ կախած, սրբոի արտասուքներ,
Եւ զոր արտասուող նոյն իսկ աչերն են
Որ վաղը ոչ ես ճանաչեն։

Կարմիր ասուի մէջ կը պատատէի
Այդ երջանիկ աւուրց նշխարք։
Կը սէի, ինչ որ տուէ յայս աշխարհ,
Է մոգերու փոքրիկ փունջ մի։
Կ'ընկերզմէի մէջն այդչափ մռայլման,
Լուզակն ինչպէս ծոմն անսահման։
Խորաչափն ամէն կողմ դարձընէի,
Մարդացմէ հեռի, միմակ, ողբայի,
Թաղուած հէգ սէրն իմ տարփալի։

Պիտի կընքէի սև կընքամոմով
Դիւրաբեկ դանձն այն սիրելի։
Եւ չքհաւատալով՝ ետ տալու էի
Երկմբտէի դեռ ողբալով։
Ո՜հ, դու տրկար կին, և հրպարտ անմիտ,
Պիտի յիշես ակամայ միշտ։
Տէր Աստուած, ինչո՞ւ իւր մտքին սրտել։
Ինչո՞ւ այդ լացեր, այդ կուրծք ջիջարդել,
Այդ հեւք, թէ դիս չէիր սիրել։

Այո՛, կ'նուաղիս, նեղուիս, լաս անդէն.
Բայց քո կեղծիք մեր մէջն է միայն։
Ողջամիտ կաց։ Պիտի հաշուես ժամերն այն
Որ դիս քեզմէ պիտի բաժնեն։
Ե՛րթ, երթ դու, և տար, սրբոիդ մէջ սառած
Գոռոզութիւնն յաղեցուցած։
Կ'զգամ դեռ իմ սիրտ ժիր ւ'երկայնակեաց,
Ուր շատ աղէտքներ կը դրոշմեն կայան,
Յետ ինձ բրած քո դէշութեան։

Ե՛րթ, երթ դու 'ի բաց, անմահ բընութիւնն
Ամենայն ինչ քեզ չուզեց տալ։

Հէգ կին, որ կամիս գեղեցիկ ելլալ,
Եւ չես շնորհեր ներողութիւն։
Գընա, հեռուէ, օն 'ի քոյին բաղդ.
Ով կորոյս քեզ, չը կորոյս շատ։
Մեր սէրն ըսպառած տուր դու հովին տրդ,—
Ի՞նչ, եթէ այնքան սիրեցի քզքեզ.
Թէ մեկնիս, դիս ինչո՞ւ սիրես։

Բայց յանկարծ խաւար գիշերին տեսայ
Մի դէմք անձայն որ կը սահէր։
Եւ վարագոյրիս կ'անցներ մէկ ըստուեր,
Եկաւ նըստաւ մահճիս վերայ։
Արդ՝ ո՞վ ես, տրբտուտ և տրժդոյն պատկեր,
Մութ կերպարան հագած սևեր։
Ի՞նչ կ'ուզես, դու հէգ անցաւոր թրքուչուն։
Սին երաշ մ'է, թէ՝ իմ պատկերքս բուն
Զոր կը տեսնեմ մէջն հայելւոյն։

Ո՞վ ես, ուրականդ իմ ծաղիկ կենաց,
Ո՞վ ուխտաւոր, դու անխոնջ յոր։
Ըսէ, ինչո՞ւ քեզ տեսնեմ անպաղար
Անցած տեղերս մութին նըստած։
Ո՞վ ես, այցելու դու առանձնակեաց,
Հիւր հետամուտ դու իմ վրշտաց։
Երկրիս վրայ ի՞նչպէս ինձ կը հետևիս։
Ուրեմն ո՞վ ես դու, երդբայր, ո՞վ ես որ,
Լոկ արտասուաց երևիս օր։

ՏԵՍԻԼՔԸ

Մեր հայրն է քոյդ, ո՞վ բարեկամ։
Զեմ ես հրեշտակ քո պահապան,
Ոչ մարդկանց բաղդ չարագուշակ։
Զեմ դիտեր ո՞ւր իմ սիրածներ
Կը դարձընեն իրենց քայլեր
Զքնչին տրղմիս վերայ ուր կամք։

Ոչ Աստուած եմ և ոչ իսկ դև,
Եւ իմ անունս տուէր վերև
Երբ կոչեցէր դու դիս եղբայր.
Ուր Երթաս, հոն միշտ պիտ՝ ելլամ,
Մինչև կենաց քո վերջին ժամ,
Պիտի նշանիմ չիրմիդ 'ի ծայր։

Քո սիրտդ ինձ երկինք յանձնեց։
Երբ դրանուիս դու ցաւի մէջ,
Ե՛կ ինձ անվախ դու միանգամ։
Ճամբուդ մէջ քեզ եմ հետևող.
Այլ ձեռք դընել քեզ չեմ կարող,
Առանձնութիւնն եմ բարեկամ։

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Նորահաստատ տպարանս՝ իրեն դիմող յաճախորդները գոհ ընելու և ազգային գրասէրներու վոգը՝ի շատէ նպաստամատոյց լինելու համար՝ պատրաստ է խիստ աժան գիներով և մաքուր տպագրութիւնով ամեն տեսակ գիրք, պարբերական թերթեր և յայտարարութիւններ, հարսանիքի և յուղարկաւորութեան ծանուցագիրեր ևն ևն տպելու։ Աւելի ընդարձակ տեղեկութիւններ ստանալ ուզողը կրնայ դիմել՝ի Սելվելի խան, վերի յարկ թիւ 17, ՄՍԵՐԵԱՆ ՏՊԱՐԱՆԸ։

ԱԼՖՐԷՏ ՏԷ ՄԻՍՍԷ

ՆՈՐ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

ՏԵՏՐԱԿ Բ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԸՆՏՐԱՆՕՔ

ՊԵՏՐՈՍ Ք. ՔԷՐԱՁԵԱՆ

ԱԼՖՐԷՏ ՏԷՄԻՍԷ

ՆՈՐ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

ՏԵՏՐԱԿ Բ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԸՆՏՐԱՆՈՎ

ՊԵՏՐՈՍ ԽԱՉԱՏՈՒՐ ԹԷՐԶԵԱՆ

ԳՐԱՖԿԵՏՏ

Երթաս բարեաւ, բոլոր կեանքիս մէջ կարծեմ
Երբէք զքեզ պիտի նորէն չտեսնեմ։
Կ'անցնի Աստուած, կ'ձայնէ քեզ, մուռնայ ղիս
Զքեզ սիրելս այժմ կ'ղգամ, զի մեկնիս։

Ոչ արտասուքներ և ոչ գանգատ ընդունայն
Հարկ են. քաջ իսկ գիտեմ յարգել ղապագայն։
Զքեզ այլուր փոխադրող նաւն թող հասնի,
Անոր մեկնիլն պիտի տեսնեմ ժպտով մի։

Դու յուսալիր ահա մեկնիս մեր քովէն,
Եւ խրոխտապանծ պիտի դառնաս դու անդրէն.
Ծակայն գիտեմ, պիտի մոռնաս այն անձեր՝
Որ ղդացին, քու բաժանմամբ, մեծ վիշտեր։

Երթաս բարեաւ, աղուոր երաշ տեսնելով,
Եւ զմայլիս վտանգաւոր բերկրանքով.
Ճամբուդ վերայ ծագող աստղին նշոյլներ
Պիտի երկար դեռ զոչոտեն քոյդ աչեր։

Գուցէ մէկ օր պիտի զգաս դու ինքնին
Թէ ինչ մեծ յարգ ունի մի սիրտ մուերմին,
Զոր ստանալն ո՞րքան մեզ տայ օգուտներ,
Եւ թէ անոր կորուստն ինչպէս տայ վիշտեր։

ԱՌ ՏԻԿԻՆ . . .

ՈՐ ԿԱՏԱԿՈՎ ԴԱՀԵԿԱՆ ՄԸ ԽՐԿԱՆ ԷՐ ԳՈՐԾՈՑ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Ինձ կը յուզարկես, չքնաղ Էմիլիդ,
Մի սիրատոմնակ աղէկ պատատած.
Զոր խորհրդապահ ձեռքդ բարեկիրթ
Ցատուկ խնամքով մ'էր գոգցես կնքած։
Բայց ինձ շնորհածդ է փոքր ինչ թեթև,
Եւ, թէպէտ ունի յաջողակութիւն,
Շատ ինայող է քու ձեռքդ արդարև
Ընելու համար ողորմածութիւն։
Մախուց նկատմամբ է ինայողութիւն՝
Եթէ քո նուէրն է հատուցում մի.
Եւ եթէ միայն է վարձատրութիւն
Ցատակ խրկելու հարկ չկար ինձի։
Ապագայի մէջն, Էմիլի սիրուն
Թէ առատաբուղխ ըլլաս դու սրտով,
Կ'աղաչեմ զքեզ, ագքատ անձերուն
Տուր ողորմութիւն քոյին աչերով։
Թէոր արժանեաց տէր մէկը գտնաս,
Եւ կամիս անոր տալ վարձատրութիւն,
Այն ատեն յիշէ զՄարգարիտաս
Եւ զԱլէն Շարթիէ քերթող Մեծանուն։
Կ'ըսուի թէ դէմքով շատ տգեղ էր նա,
Տիկինն էր դստրիկ թագաւորազուն.
Եւ ստիպուած եմ հաստատել ահա՝
Թէ գրէր տաղերն ինձմէ լաւագոյն։

Բայց թէ որ գրիչս իմ յարգ մը չունի,
Աւաղ, իմին սիրոս աւելի չարժեր.
Արձակ գրութեան համար իսկ լինի
Շատ վտանգաւոր են քու բնծաներ։
Թող քու վեհերոտ ողորմածութիւն
Պահէ իւր արծաթն և իրեն ոսկին
Զի քու պարապ ձեռքդ բանալով՝ իսկոյն
Կրնաս շնորհել դու մի գանձ անգին։

1840ի քաղաքական դէպքերուն ստեղները Պէքէր գերմանացի քերթողին Գաղղիացւոց դէմ գրած սոյն հետեւեալ երգը ժողովրդային եղած էր Գերմանիոյ մէջ, որոյ պատասխան կու տայ հռչակաւորն Ալֆրէտ տը Միւսէ ի պաշտպանութիւն գաղղիական յաղթող դրօշակին։

ՊԷՔԷՐԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՊԷՔԷՐԻ

ԱՐՁԱԿ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԳԵՐՄԱՆԵՐԷՆԷ Ի ՖՐԱՆՍԵՐԷՆ

Պիտի չառնուն ազատ Ռէնն գերմանական, թէև անյաղ ագռաւներու պէս զայն կը խնդրեն իրենց աղաղակներով։

Որքան երկար ատեն որ նա հոսէ հանդարտիկ, իւր կանաչագեղ ղգեստն հագած. որքան երկար ատեն որ թի մը բաղխէ իւր ալեաց։

Պիտի չառնուն ազատ Ռէնն գերմանական, որքան երկար ատեն որ սիրտերն առոգին իւր հրաչունչ գինիով, որքան երկար ատեն որ աղաւաժներ կանգնուն մնան իւր հոսանքին մէջ. որքան երկար ատեն որ բարձր կաթուղիկէներ ցոլանան իւր հայելանման ջուրին մէջ։

Պիտի չառնուն ազատ Ռէնն գերմանական, որքան երկար ատեն որ յանդուգն երիտասարդներ քծնին սիրով բարձրահասակ երիտասարդուհեաց։

Պիտի չառնուն ազատ Ռէնն գերմանական մինչև որ յետին մարդուն ոսկորներն անոր ալեաց մէջ թաղուին։

ՌԷՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ՊԷՔԷՐԻ ԵՐԳԻՆ

Առինք ձեր Ռէնն գերմանական,(1)
Մեր զօրութեան տակն ինկաւ արդ։
Երգած տաղերն ձեր յաղթական
Կրնայ եղծել այն հետքն հպարտ,
Զոր ոտք մեր ձիերուն դրոշմեց մէջ ձեր արեան։

Առինք ձեր Ռէնն գերմանական,
Մի բացուած վերք առաւ իւր ծոց՝
Այն ինչ Քոնտէ մեր յաղթական
Պատռեց անոր կանաչ ծածկոց.
Ուրկէ որ հայրն անցաւ, կ'անցնի ևս իւր տղան։

Առինք ձեր Ռէնն գերմանական.
Ի՞նչ կ'ընէին ձերին քաջեր,
Երբ Մեր Կեսարն(2) ամենիշխան
Իւր սուերով ձեր դաշտ ծածկեր.
Ուրեմն ձեր յետին ոսկորներն ուր ինկան։

Առինք ձեր Ռէնն գերմանական.
Թէ պատմութիւն ձեր կը մոռնաք,
Անշուշտ դեռհաս աղջկունքդ համայն
Լաւ պահեցին մեր յիշատակ.
Լնելով մեզ սպիտակ ձեր գինին սիրական։

1 Տեսնելով որ սոյն երգին վեց պարբերութեան առաջին, երրորդ և վերջին տողերուն յանգերը Գաղղիարէն բնագրին մէջ մասնաւոր խնամքով ան վերջաւորած է, մեք ևս աշխատեցանք անոր նմանցնել մեր յանգերը։ 2) Նաբոլէոն Պոնապարդ Ա։

Թէ ձերն է Ռէնն գերմանական,
Հոն լուացէք գրատն ձեր(3)
Այլ մի խօսիք ամբարտաւան,
Ո՞ր քան նօթի դուք ագռաւներ
Շնչասպառ արծուին(4) դէմ եղաք յօրն գիշատման։

Հոսէ հանդարտ ձեր Ռէնն Գերման.
Թող տաճարներն ձեր գոթացի
Համեստութեամբ հոն ցոլանան.
Այլ վախցի՛ք, ձեր երգովք մոլի(5)
Արիւնոտ հանգիստէ մեռելներն չ'արթննան։

3) Համազգեստ սպասաւորաց։ 4) Ֆրանսա միւս տէրութեանց հետ պատերազմած ատեն։ 5) Գիլեմոլ, Բագոսեան։

ԳԻՐ ԱՌ ԼԱՌԱՐԻՆ

Երբոր մեծ Պայրն պատրաստուէր Ռավէնայէն մեկնելու,
Եւ ծովէ ծով մի հեռաւոր այնպէս երկիր գտնելու,
Ուր ձայնձրոյթին իւր մշտաւ վերջ տայ նման դիւցազնի.
Երբ սիրուհւոյն ոտքերուն քով նստած ժդոյն դէմքով մի՝
Ցունաստանի կողմն արդէն նա դարձուցած էր իւր աչեր,
Նոյն սիրուհին զոր այն տաեն իւր Կիչիոլին կ'անուանէր
Մէկ երեկոյ գիրք մը բացաւ, որ իւր վերայ կը խօսէր։

Ո՛վ Լամարթին, պահեցիր դու գիշատակն այն աւուր
Եւ կը յիշէս դու տակաւին, թէ ո՞վ տաղերդ քաղցրալուր
Բանահիւսած էր այն տաեն տարագրելոյ դիւցազնին,
Մի պատանի էիր յայնժամ, դո՛ւ, ո՛վ պարծանք մեր երկրին,
Մինչդեռ հաղիւ կը փորձէիր առջի անդամն համարձակ
Այդ լալագին սիրուն ընարն որ թրթռայ քու մատանց տակ։
Եւ Երկինքէն քեզ նշանուած քոյին Մուսայ խանդավառ
Քու մտախոհ ճակտին վերայ կ'որոնէր քոյդ վեհ հանճար՝
Որ երկչոտ կոյս մ'էր տակաւին սիրող չքեղ պսակաց։
Զէիր ճանչնար, դու այն տաեն, ազնիւ զաւակ Հայրենեաց,
Զ'էիր ճանչնար, թէ ոչ կրած տառապանքէն դառնալիր,
Այն վեհագոյն ամբարհաւաճն, որուն գիրեր կ'ուղղէիր։
Ի՞նչ իրաւամբ յանդգնէիր մերձիլ 'ի նա, դիթալով,
Եւ ո՞ր արժիւն, զքեզ Կանիմէտ, այդ Աստուծոյն տանէր քով
Նախաշգայիր թէ դու օր մի համնիլ պիտի կրնայիր
Այնմ՝ որ յայնժամ այնքան բարձուէ քեզ կը լինէր ունկնդիր
Ո՛չ, դու քսան տարուան էիր, արդէն քու սիրտ կը տրոփէր,
Նոր կարդացած էիր Լարա, զՄանֆրէտ և զՔիօրսէր,
Եւ դու դրած էիր տաղեր՝ արտասուալի աչերով։

Պայրքնի շունչն զքեզ երկրէս վերացքնէր իրեն քով
Եւ վերամբարձ իւր վիշտերով՝ կը դիմէիր դէպ՝ իրեն.
Անոր հոգւոյն մշտաչարչար կը ձայնէիր հեռուէն.
Թէև վսեմ կ'երևար քեզ, զինքն դդայիր մերձաւոր,
Եւ յորդալուր հեղեղի պէս կանաչագեղն 'ի ծործոր,
Իւր հանճարին արձագանքը կը հեծէր քու սրտիդ խոր։

Եւ նա՝ որոյ դեռ Եւրոպան սպառազէն բովանդակ,
Մտիկ կ'ընէր դողդղալով համայն տաղերքն վայրագ.
Նա՝ որ տասք տարիէ վեր խոյս կու տար իւր համբաւէն
Եւ կը ընոյր առանձնութեամբն զտիեզերս համօրէն.
Նա՝ ներշնչեալն ամենամեծ, Մելամաղձոտ Թախիծէ,
Որ նահատակ մ'էր եղած՝ խոնջ նախանձելի բլլալէ.
Նա՝ որ թշուառն Իտալիոյ էր սիրահար մի յետին,
Երբ մեկնելու պատրաստ էր իւր տարագրութեան մէջ վերջին.
Նա՝ որ փառացն այս աշխարհի բոլորովին յագեցած՝
Իբր Կարապ, իրեն երգէն, տեսնելով մահն մօտեցած,
Երկրի վերայ շուրջն որոնէր, որո՞ւ համար ինքն մեռնի . . .
Մտիկ բրաւ այն նուագներն, զոր կարդար իւր սիրուհի,
Եւ անծանօթ պատանի մ'այն հեռաւոր քաղցր ողջոյն։
Զ'եմ գիտեր թէ նա հասկցաւ անոր ոճին ճոխութիւն,
Այլ աչերուն մէջ տեսնուած տխրութիւնն իսկ ժպտեցաւ,
Ինչ որ սրտէ յառաջ կու գար իրեն հաճոյ երևցաւ։

Քերթող, արդ քու հաւատարիմ Մուսայդ վստահ բլլալով՝
Թէ միշտ անմահ պիտի մնայ քու ամոթլեած այդ սիրով,
Ճակտիդ վերայ պսակ դրաւ աղաւնարօտ ծաղկափթիթ,
Իբր մեծ Պայրքն ընդունէ՝, նաև դու դիս քու կարգիդ։
Հաւատարիմ քեզի երբէք՝ ես յոյս չունիմ բնաւին.
Զ'ունիմ նաև ես այն հանճարն, զոր պարգևեց քեզ երկին,
Որքան հեռի եմք իրարմէ աստիճանաւ մեր անձին,
Այնքան մեծ է ընդարձն Աստուծոյ, որ մեզ կ'ընէ մտերիմ։
Արդ անօգուտ իմ գովեստներն ես չ'եմ ուղղեր հոս քեզի
Եւ չեմ խորհիր ես բնաւին թէ պատասխան տաս ինձի.
Այդ փառաւոր փոխադարձներ առարկուելու համար քեզ

Կը պահանջեն ստորագիր մ'այն անուան զոր չ'ունիմ ես։
Երկար տառեն զիս յաշխարհէ վաստակաբեկ կարծէիր,
Եւ հաւատալով թէ կ'երկմտիմ, ես կուրանամ կ'ըսէի.
Եւ ես իրրև խորին գիշեր մի սեպեցի իմ ստուեր,
Որ լիուլի ունայնութեամբ իմ առջևէս կը սահէր։
Քերթող, ահա գրեմ քեզի, ըսելու թէ սէր ունիմ,
Թէ մէկ նշոյլն արեգական թափանցեց խորն սրտի իմ,
Եւ թէ օր մը 'ի մէջ սուգի և վշտերու վեհագոյն
Աչքէս թափած իմ արտասուքներ միտքս բերին քեզ խսկոյն։

Ո՛վ Լամարթին, մեզմէ ո՞վ գոց չդիտեր մեր մանկութեան
Այն երգը, որ պաշտելի է սիրողներէն ամենայն,
Զոր լքճի մ'եղրն երեկոյ մի երգեցիր մեզ սրտագին։
Ո՞վ չ'կարդաց հաղար անգամ, ո՞վ չ'կարդար միշտ կրկին,
Խորհրդաւոր տաղերն յորում կը խօսի քու սիրուհին,
Եւ ո՞վ արդեօք չ'հեծեց այդ հեւոց վերայ երկնային,
Որք են խորին երկնի նման, մաքուր՝ ինչպէս ալիքներ։
Աւա՜ղ, պատիր ու կեղծ սիրոյ երկարատև այն վիշտեր,
Ժամանակի կորուստներն այն, զորս ամեն քայլ գտնէ ոք,
Այն անսահման նշմարանքներն նշոյլներու վաղանցուկ,
Ո՞վ կարող է մարդ անուանիլ և չ'ճանչնալ զայն ամեն։
Ո՞վ որ երբէք սէր ունենայ, կ'առնէ սպի մի անդէն
Ամեն ոք զայն ունի,իւր ծոց բացուելու միշտ կաղմ ինքնին.
Ամեն ոք զայն պահէ իւր մէջն. վիշտ դաղտնի և կաթոդին,
Եւ որքան լաւ դարնուի նա, բուժիչն այնքան քիչ կամի։
ՀաՀրկ իսկ է քեզ ըսել արդեօք, ո՞վ երաժիշտ աղէտի,
Թէ կրեցի և ես ինքնին քու փառաւոր վիշտն ու ցաւ,
Թէ վայրիկ մի, ես քեզի պէս, առաջն երկնիս այս անբաւ,
Բազուկներուս մէջ սեղմեցի կենդանութիւնն և զոյս,
Եւ իմ երաշն, ինչպէս և քոյդ, ինձմէ խսկոյն տուաւ խոյս։
ՀաՀրկ է ըսել թ'երեկոյ մի թեթև հովին քաղցրաբոյր,
Երջանկութեան հանգստի մէջն երբ ննջէի ես անդոյր,
Եւ սիրելի միակ ձայնի հնչումներուն երկնային,
Ես կ'զգայի թէ ժամանակն կանգ կ'առներ մէջն իմ սրտին։

ՀաՀրկ է ըսել թ'երեկոյ մի, երկրիս վերայ միայնակ,
Երբ քեզ նման կ'սպառէր զիս մի սոսկալի յիշատակ,
Ես զարմացայ և ապշեցայ թշուառութեանս իմ յատուկ,
Եւ թէ որքան կը տառապի և չ'մեռնիր մի մանուկ։
Ո՜հ, ինչ որ ես զարհուրելի այն վայրկենին զգացի,
Գիտի ժամիմ արդ ողբալու և պատմելու զայն քեզի.
Ի՞նչպէս յայտնեմ մի տառապանք անասելի արդարև,
Կրնամ դեռ ևս ես զայն փորձել, քեզմէ յետոյ, քու առջև։
Այո՛ կ'ուզեմ հաւատարիմ վէպը պատմել ես քեզի
Աղետալի օրուան, յորում ահ և հրապոյրք էին լի.
Սոքա երբէք չեն նուագներ, այլ արտասուքներ տխրամած
Եւ քեզ միայն պիտի պատմեմ, ինչ որ քսաւ ինձ Աստուած։

Երբ հողագործն երեկոյին դէպ՝ իրեն հիւղ դառնալով՝
Ցեռնէ իւր արտն աւեր դարձած շանթի միակ հարուածով.
Նախ՝ կը կարծէ թէ երազ մի շլացուցնէ իւր աչեր.
Եւ իւր վերայ երկմտելով հարցաքննէ նա ղեթեր։
Մութ է գիշերն ամենուրեք, լոցակիղեաճ է գետին.
Նա կ'որոնէ իւր բոլորտիք սովորական այն տեղին,
Ուր կիսաբաց սեմին վերայ կինն իւր գալուն կ'սպասէ.
Այլ անապատ այն վայրին մէջ փոքր ինչ մոխիր կը տեսնէ։
Մինչ թուփերէն դուրս ելնելով իւր զաւակունք կիսամերկ,
Կու գան իրեն քով կը պատմեն, ինչպէս մայրիկն իրենց հեգ
Հիւղին ներքև մահացած էր գոչիւններով սոսկալի,
Բայց այժմ լո՜ւռ է ամեն ինչ, յայնմ հեռաւոր 'ի մայրի։
Ողորմելին ունկնդիր է և հասկընայ իւր աւեր,
Վհատելով՝ կուրծքին վերայ կը սեղմէ իւր զաւակներ,
Եւ երթէ ձեռք չ'կառկառէ, ոչ ճնայ այլ ինչ ինքեան,
Բայց գիշերիս՝ անօթութիւն, և 'ի վաղիւ՝ մահ միայն։
Իւր չնչարգել կուրծքէն և ոչ դուրս կ'ելնէ հեւ մի տխուր,
Առանց ձայնի և երերուն, անմոռախոհ և անզօր,
Նա մեկուսի նստի աչերն հորիզոնին վրայ յառած,
Եւ մրրկի մէջ տեղերէն մի սեւ մուխի թանձրամած
Նա տեսնելով՝ որ սպառած իւր հուձն հեռի կը փախչի,
Թշուառութեան տրբեցութիւնն խելքը գլխէն կը տանի,

Այսպէս, երբ դիս 'ի բաց թողուց մի սիրադրուժ սիրուհի,
Առջի անգամն եղաւ որ ես դառնապէս ցաւ զգացի,
Ցանկարծ նետէ մ'արիւնալի թափանցական զարնուած՝
Ես առանձին նստայ սրտիս խաւարին մէջ սեւազգեաց։
Ոչ թէ լքճի մ'եղերքն էի, որոյ ծփանքն են վճիտ,
Եւ ոչ բլրոց 'ի զառի վայրն խոտին վերայ ծաղկափթիթ.
Իմին աչերն արտասուալի դատարկութիւնն աեսնէին,
Իմ հեղձական հեկեկանքներն արձագանք մ'իսկ չտային։
Այլ փողոցի մի մէջն էի բազմապտոյտ, մթագոյն,
Այն լայնատարր կոյանոցին, որոյ Փարիզ տան անուն,
Ուր իմին շուրջն աղաղակէր այդ խուռն ամբոխ ծաղրասէր,
Որ տարաբաղդ թշուառներու ձայներն երբէք չ'ըլսէր։
Մինչդեռ մթին սալարկներուն վերայ տմոյն լապտերներ,
Ծաւալէին մի տկար լոյս տխրագոյն քան զգիշեր,
Եւ, ըստ դիպաց, հետեւելով մարդ ըլսերուն այն աղօտ՝
Ստուերներուն մէջէն կ'անցնէր, ձայներուն միշտ հետամուտ։
Տարօրինակ մի ցնծութիւն կարծես ամեն կողմն հնչէր,
Բարեկենդան օրերու մէջ Փետրվարի ամիսն էր,
Դիմակաւոր գինեմոլներ տղմին մէջէն անցնելով՝
Կը խօսէին հայհոյանքով կամ դառնիկ վերջներդով։
Մի բաց կառքի մէջն իրարու վերայ դիզուած մի խմբակ,
Ատեն ատեն կը նշմարուէր անձրեւային երկնի տակ.
Ցետոյ հեռուն մէջն անդդամ քաղքին անհետ նա կ'ելլար,
Ոռնալով երդ մ'ամենապիղծ ջահերուն տակ բոցավառ։
Բայց և այնպէս ծերունիներ, կանայք, նոյն իսկ տղաքներ,
Դինետանց խորն մինչև մրուր կը քամէին գաւաթներ,
Մինչ խայտառակ և անհամեստ քրմուհիներ գիշերուան
Այս և այն կողմ կը շրջէին իրր անհանգիստ ուրուական։
Կարծես պատկեր մի տեսնուէր այն լկտութեան հինօրեայ,
Այն անուանի գիշերներուն հաճոյ ազգին Հռոմայ,
Ուր անհամեստն Աստղիկ, գաղտնի մեհեաններէն դուրս կ'ելնէր,
Ջահն իւր ձեռքին մէջ բռնելով և արձակած իւր մազեր։
Արդ՝ ամ Աստուած. այսպէս գիշեր մ'արտասուք թափել միայնակ,
Արդեօք ես ինչ բրած էի, քեզի, ով սէրդ իմ միակ.
Չիս մերժեցիր, դու որ առջի գիշերն երդում բրիր թէ

Դու լոկ, այո, իմ կեանքս էիր և թէ Աստուած զայն գիտէ։
Ցուրտ և անգութ դու սիրուհի, ոհ, գիտէիր այն ատեն,
Թէ հոն էի. ա'այն ամօթոյ և մթութեան մէջ տեղէն
Ես ակնապիշ նկատէի քու սիրավառ կանթեղին
Դողդոջագին պայծառութիւնն իրր մի աստղ 'ի յերկին։
Ո՜չ, դու այդ բանն չ'գիտէիր, չ'տեսայ ստուերդ ես բնաւ,
Կիսաբանալ քու վարագոյրն ձեռքդ երբէք հոն չեկաւ,
Եւ դու բնաւ չ'գիտեցիր, եթէ երկինքն էր մթին,
Դու դիս բնաւ չ'որոնեցիր այն սոսկալի մէջ շիրմին։

Ո՛վ Լամարթին, ահա, հոն այն փողոցին մէջ մթամած,
Որ քառուղի ճամբու մը խորն, եզրին վերայ ես նստած՝
Երկու ձեռքերս սրտիս վերայ, երբ սեղմէի ես իմ վէր,
Եւ զգայի թ'արիւնալի հոսէ անկէ անյաղթ սէր.
Ահա հոն, այն գիշերուան մէջն անձկութեան և սսկումի,
Ուրախութեան մէջ տեղէն իսկ մի մոլեգին ամբոխի,
Որ անցնելով կարծես գոչէր պատանութեանն իմ այսպէս.
«Դու որ կու լաս այս երեկոյ, չ'խնդացիր անոնց պէս.»
Ահա հոն, այն որմին առաջն, ուր իմ գլուխն ես զարկի,
Ուր մերկ կուրծքիս վերայ սուսերն երկու անգամ ես դէբրի,
Ահա հոն էր, կը հաւատամ, քերթող պարկեշտ և աղնիւ,
Որ երկնային քու նուագներն ես յիշեցի հէգ սրտիս։

Դու որ սիրելն աղէկ գիտես, ըսէ՛, սիրողդ Էլվիրի,
Մթթէ երկու սիրող սրտեր կ'տան միմեանց հրաժեշտ մի,
Կարելի՞ է որ այդ բառը կարողանայ ձեռք գրել
Եւ սիրտը զայն ստորագրել և շրթունքներն զայն պատմել։
Այն շրթունքներ, զոր համբոյր մի յօդեց առաջն Աստուծոյ.
Կարելի՞ է թէ այն կապը, որ մէջն անմահ մեր հոգւոյ,
Կ'աճի առանց մեր գիտութեան ամեն օր միշտ խորագոյն,
Որ ապստամբ կամքը մեր մէջն արմատախլէ նա իսկոյն,
Եւ իւր հիւսուածքն սքանչելի միաւորէ սրտին մեր,
Ամենազօր կապն այն, որոյ թեզանն և հանգոյցներ
Կարծրագոյն են ապառաժէն և ադամանդ քարերէն,
Որ չ'երկինչի ժամանակէն, սուրէն և ոչ կրակէն,

Ոչ նոյն ինքն 'ի մահուանէ, և որ սիրել կու տայ յար,
Սիրողներուն իրենց ոսկերքն մինչև չիրմին մէջ ղիրար,
Կարելի՞ է որ այն կապը տասը տարի մեղ կապէ,
Եւ թէ զմեզ, տասը տարի, 'ի մի մարմին նա կաղմէ,
Ցեռոյ յանկարծ խորտակի, և միջոցին մէջ ցնդելով՝
Նա մեզ թողու զարհուրելի, երջանիկ կեաղ կարծելով։

Ո՛վ Քերթող, դա՞ռն է արդարև թէ բնութիւն մարդկութեան
Որ յամրաքայլ յառաջանայ դէպ 'ի ստոյգ մի վախճան,
Տառապանքներ միշտ կրելով պարտի դեռ հոն յապաղիլ,
Եւ շատ անգամ, պէտք է անոր աշխարհիս մէջ մեռանիլ։
Վասն զի ինչ ուրիշ անուամբ կրնայ կոչուիլ երկրի վրան,
Թշուառութիւն փոփոխելու այն կարևոր հարկ միայն,
Որ մեզ թողուլ և առնել տայ ամեն ինչ տիւ և գիշեր,
Այնպէս որ մէկ անյագելի տենչով կ'անցնին մեր օրեր։
Ո՞չ ապաքէն մեռելներ են, և մեռելներ սոսկալի,
Այն փոփոխմունքն այնքան տարբեր արարածոց սիրելի,
Որք յուսալէ միշտ տաղտկացած ինքզինքնին կը կոչեն,
Եւ որոնք միշտ մէկէն 'ի միւսն այլակերպել պատրաստ են։
Սիրան ինչպէս խոր դերեզման մ'է, և որպիսի մենութիւն,
Ինչպէս կիրքք ունակութիւն կ'ըլլայ մարդոց որտերուն,
Եւ թէ ինչպէս կարելի է որ առանց բնաւ դայթելու՝
Մարդ կարենայ նոյն իսկ իրեն նշխարց վերայ քալելու։
Բայց և այնպէս կը քայլէ հոն, զի Աստուած զայն հրաւիրէ.
Կը սերմանէ նա ամեն կողմ, և իւր կեանքը կը վարոնէ.
Բաղձանք, երկիւղ, որոմնութիւն, տագնապ սրտի, ձանձրութիւն
Կ'անցնին ամենքն, կ'անհետանան, իւր մէջ ցնորքէ համբուն։
Իւր թշուառ սիրան այնպէս կերպով մ'է կաղմուած 'ի բնէ,
Որ անդադար աւերակ մը պէտք է անկէ դուրս ելնէ.
Ինքը երբէք չ'անգիտանար թէ իւր վախճանն մահ լինի,
Եւ դէպ 'ի մահ ընթանալով՝ նա յամեն քայլ մեռանի։
Մեռանի նա յիւր բարեկամն, յորդիս, 'ի հայր սիրական.
Մեռանի նա իւր ողբոց մէջն և 'ի յոյս իւր ընդունայն,
Եւ բաց առեալ այն մարմիններն, որոնք պէտք են իսկ թաղուիլ,
Ի՞նչ է ուրեմն մեռանալը, ո՞չ ապաքէն է մեռնիլ։

Ո՜հ, մեռնելէն աւելի է, և ապրիլ է յետ մահուան,
Հոգին յերկինս վերանայ, երբ կորնչի մեր սիրած բան,
Մեզմէ ուրիշ բան չմնար, այլ մի դիակ կենդանի,
Ուր բնակի անյուսութիւնն, և չէութիւնն ակն ունի։

Արդ՝ լաւ կամ վատ, դժուարակոր կամ դիւրաբեկ միանգամ,
Խոնարհ կամ սեղ, տխուր կամ ղուարթ, բայց հառաջող յամեն ժամ,
Այն մարդն, ինչպէս որ եղած է, այն արարածն հողեղէն
Զոր դու տեսար, ո՛վ Լամարթին, և համարիւն ես իրեն։
Ունիս զնոյն երջանկութիւն, նմանավիշտ ես անոր,
Եւ դեռ նորա հանդուրժելու աղէտներէն երկրաւոր
Զ'իք և մի որ քեզ չ'հեզգի և չ'լինի քեզ ընկեր.
Զի բարեկամ գիտես երգել. գիտես թափել արտասուքներ։
Ինձ ըսէ, ինչ կը խորհիս դու մէջ տխրութեան օրերուդ,
Թշուառութիւնն ինչ ըսաւ քեզ, երբ հարցուցեր դու խորհուրդ։
Խաբուած 'ի քո բարեկամաց, սիրուհիէդ մատնուած՝
Երկնի և քոյդ անձին վերայ դու ունեցար մի կասկած։
Ո՞չ Ալֆոնս, ո՞չ Երբէք։ Համայն փորձառութիւն ձեր տխուր
Մեզ կը բերէ տնոր ուճիւն, և չքմարեր նորա հուր։
Դու կը յարգես ազէտն այն, զոր Նախախնամողն է առթած.
Թողուս զայն, որ անցնի երթայ և հաւատաս քոյդ Աստուած։
Որ և իցէ, Նոյն ինքն իմն է. չ'կան հաւատք կրկնակի,
Անոր անունն ես չեմ դիտեր, այլ ես զերկինս դիտեցի.
Գիտեմ իրենն են բովանդակ, գիտեմ թէ են անսահման,
Եւ թէ երկուց չէ կարելի թ'անհունութիւն ունենան։
Դեռ պատանի՝ ես սասկագոյն տառապանքներ զգայի.
Տեսայ ծիլն անտառներուն, և ես սիրել փորձեցի,
Գիտեմ թէ ինչ քաղցրիկ յոյսեր կուլ կու տայ այս հողագունտ
Եւ զոր ինչպէտք է սերմանել, որ հունձ քաղենք բազմագուտ։
Սակայն ինչ որ ես զգայի, ինչ որ կ'ուզեմ քեզ գրել,
Այն բաներն են, զոր ուսուցին ինձի ցաւոց հրեշտակներ.
Ես զայն լաւ ես կը ճանաչեմ, կրնամ լաւ ես ըսել զայն,
Զի անոնց սուրն յիս մխուելով՝ դրոշմեց սրտիս իմ վրան։

Ո՛վ արարած դու առօրեայ, որ ապրելու ժամ մ՛ունիս,
Ո՛վ է պատճառն հառաչանքիդ և ի՞նչ բանէ դանդատիս.
Քեզ կը նեղէ քու հոգիդ և կարծես թէ լայ ողբագին,
Ցաւէտ անմահ է քու հոգին, և արտասուքներդ կը ցամքին։

Կ՛զգաս որ քու սիրտդ է խաբուած քմահաճոյքէն կնոջ մի,
Եւ կ՛քսես թէ տառապանքներ քաշելով նա խորտակի,
Դու կը խնդրես Աստուծմէ որ մխիթարէ քու հոգիդ,
Ցաւէտ անմահ է քու հոգին, պիտի բուժի և քու սիրտ։

Վայրկենական ցաւագնութիւնն քեզ սրտայոյզ կ՛սպառէ,
Եւ դու կ՛քսես թէ զապագայն, անցեալն աչքէդ կը ծածկէ.
Մի դանդատիր դու անցեալէն. թող որ ծագի արշալոյս,
Ցաւէտ անմահ է քու հոգին. ժամանակն իսկ կ՛տայ խոյս։

Վաստակաբեկ է քու մարմին 'ի յուզմանէ քու մտաց,
Դու ծանրացած կ՛զգաս քու գլուխ, և քու ծնկերն կորացած.
Անկիր աղէ, 'ի ծունր իջիր, ո՛վ արարած դու անմիտ,
Ցաւէտ անմահ է քու հոգին, պիտի գայ մահն աներկմիտ։

Պիտի 'ի հողդառնան անդրէն քու ոսկորներն մէջ չիրմին
Քու յիշատակ, փառք և անուն պիտի խսպառ կորնչին.
Բայց ոչ քու սէրն, եթէ այդ սէրն է սիրելի քեզ միայն,
Ցաւէտ անմահ է քու հոգին, և պիտի միշտ յիշէ զայն։

[illegible]
1932

ՀՀ Ազգային գրադարան
NL0337444